Հաստատում եմ՝

Համայնքի ղեկավար՝ Հ.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2027ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Հուսիկ Սահակյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2023թ. թիվ 008–Ա որոշմամբ

2023թ. գ.Արենի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 1
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 2
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 3
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....4
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 5
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ 6
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....7
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 8
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .9
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....10
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....11
4. ՀԶԾ ֆինանսավորում.....12
5.ՀԶԾ մոնիթորինգ.....13

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը

2017 թվականի նոյեմբերի 5-ին կայացած համայնքների խոշորացման գործընթացում ձևավորվեց Արենի գյուղական համայնքը՝ իր մեջ ներառելով 9 նախկին համայնքներ : Համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, բնական և իրենցից պատմական մեծ արժեք ներկայացնող քարանձավներով, բազմաշերտ և գեղատեսիլ բնությամբ: Ունի գինեգործության հարուստ ավանդույթ, որը վերջին տարիներին մեծ թափով սկսել է զարգանալ: Արենի համայնքը հնուց ի վեր հայտնի է հյուրընկալության և հյուրասիրության բարի ավանդույթներով, որը կարող է խթան հանդիսանալ ողջ աշխարհում զարգացման մեծ տենդեց ապրող զբոսաշրջության բիզնեսի զարգացումը համայնքում ակտիվացնելու համար:

Համայնքի բնակավայրերում բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտուղ-բանջարեղենի արտադրությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ, գինեգործությամբ, զարգանում է փոքր բիզնեսը, հյուրատնային բիզնեսը, գործույմ է տեքստիլ արդյունաբերության արտադրամաս Խաչիկ բնակավայրում, որը ընդլայնման միտում ունի, մասնավոր ներդրումների միջոցով կառուցվում է հյուրանոցային համալիր Արենի բնակավայրում: Բարեգործական հիմնադրամի միջոցներով մանկապարտեզ է կառուցվում Արենի բնակավայրում: Համայնքում առկա են բոլոր նպաստավոր պայմանները զբոսաշրջությունը զարգացնելու համար:

Բարենպաստ պայմանները կան համայնքում նոր ,էկոլոգիապես մաքուր գյուղտնտեսական արտադրանք ստանալու համար:

Համայնքի տնտեսական զարգացման,սոցիալական խնդիրների լուծմանն է միտված ներկայացվող 5-ամյա զարգացման ծրագիրը, որը կյանքի կոչելու համար օգտագործվելու է համայնքի սեփական միջոցները, ինչպես նաև պետական կառույցների, հիմնադրամների , գործարարների և մասնավոր հատվածի ներդրումները:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1.1 ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արենի բնակավայրը գտնվում է Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում, զբաղեցնում է 4359.52 հա տարածք: Հայաստանի հնագույն բնակավայրերից է,որի մասին են փաստում 2008թվականին բնակավայրում հայտնաբերված գտածոները: Գյուղն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն՝ աշխարհում հայտնի Նորավանքի եկեղեցական համալիրը, հին գյուղատեղին ,13-րդ դարում կառուցած սրբ.Աստվածածին եկեղեցին, 13-րդ դարում կառուցած եռակամար կամուրջը, խաչքարեր, ամրոցը, մ.թ.ա 2-րդ հազարամյակի կիկլոպյան ամրոց, բնական քարայրներ՝ Մագիլի, Թռչունների քարանձավները:
Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1090 մետր բարձրության վրա:
Բնակավայրը ունի բազմաթիվ խնդիրներ:
Դրանցից առաջնային են բնակավայրի ողջ բնակչությանը շուրջօրյա և որակյալ խմելու ջուր մատակարարելը, ներհամայնքային ճանապարհների բարեկարգումը և հիմնանորոգումը, մշակույթի տան հիմնանորոգումը, նոր կոյուղագծի, գազատարի կառուցումը և այլն: Գյուղի կլիման ցամաքային է, ձմեռը չափավոր ցուրտ է, ամառը՝ շոգ ու երկարատև, տեղումների քանակը՝ 250-300մմ:
Բնակչությունը հիմնականում զբաղվում է խաղողագործությամբ , պտղագործությամբ և գինեգործությամբ, զարգանում է հյուրատնային բիզնեսը:
Տները հիմնականում բարեկարգ են : Ենթակառուցվածքները ունեն բարեկարգման կարիք: Գյուղը ունի 1971 մշտական բնակիչ, որից 960 կին:

2.1.2 ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արփի գյուղը համայնքի ամենաերիտասարդ բնակավայրն է՝ հիմնադրվել է 1965 թվականին Գնիշիկ գյուղի տարհանման բազայի վրա: Գյուղը գտնվում է Արփա գետի աջ ափին, մարզկենտրոնից 8կմ արևմուտք: Գյուղի բարձրությունը ծովի մակարդակից 1100մ մետր է, կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ խիստ շոգ: Տեղումների քանակը տարեկան 250-350մմ է: Բնակավայրը գազաֆիկացված է, ունի կանոնակարգված կոյուղագիծ, բացառությամբ Գետափաթաղ կոչվող թաղամասի, սակայն չունի կոյուղաջրերի հավաքման կայան, բարեկարգման կարիք ունեն ենթակառուցվածքները:
Ըստ ավանդության, գյուղի խմելու ջուրը, որի ակունքը գտվում է «Ջրովանքի ձոր» կոչվող ձորակում, ունի մաշկային հիվադություններ բուժելու հատկություն : Նշված ջրաղբյուրի հարևանությամբ գտնվում է նույն անունը կրող բնական քարանձավ-սրբատեղին, ուր մշտապես այցելում են հանրապետության տարբեր վայրերից զբոսաշրջիկներ:
Բնակավայրի վարչական սահմաններում է գտնվում Էրթիջ կոչվող հին բնակավայրի ավերակները, բնակավայրում տեղակայված են հուշարձան-խաչքարեր, 13-րդ դարի թվագրությամբ խոյերի քանդակներ:
Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ մեղվապահությամբ և բանջարեղենի արտադրությամբ: Մշտական աշխատանքով զբաղված է 64 մարդ:
Բնակավայրի մշտական բնակչության թիվը 1161 է, որից 577 կին:

2.1.3 ԱԳԱՐԱԿԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ագարակաձոր բնակավայրը գտնվում է Արփա գետի ձախ ափին: Կլիման բարեխառն է, տեղումների քանակը տարեկան 350-400 մմ է : Բնակավայրում պահպանվում են մշակութային հուշարձաններ՝ 13-րդ դարում Օրբելյան իշխանական տան կողմից կառուցված, 9-րդ դարի ամրոցի ավերակներ, 12-րդ դարի խաչքարեր, 17-րդ դարում կառուցած եկեղեցու ավերակներ և 17-րդ դարում կառուցած Սրբ.Հովհաննես մատուռը: Բնակավայրը հարուստ է տուֆի հանքավայրերով, հանքային ջրերի պաշարով: Բնակավայրը գազաֆիկացված է , գործում է սննդի արդյունաբերական ձեռնարկություն, սակայն շատ վատ վիճակում են ենթակառուցվածքները՝ ճանապարհներ, խմելու , ոռոգման ջրագծեր և այլն: Բնակչությունը հիմնականում է զբաղվում է անասնապահությամբ և բանջարեղենի արտադրությամբ:

Բնակավայրը մեծ պոտենցիալ ունի տուրիզմի զարգացման և կայուն զարգացած գյուղատնտեսական աճ ապահովելու համար:

Բնակչության թիվը 1385 է, որից 652 կին:

2.1.4 ԱՂԱՎՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աղավնաձոր բնակավայրը համայնքի հին բնակավայրերից է , վերաբնակեցվել է 1928թվականին Պարսկաստանից գաղթած հայ ընտանիքներով: Բնակավայրի վարչական տարածքը 5045 հա է, գտնվում է ծովի մակերևույթից 1400 մետր բարձրության վրա: Կլիման մեղմ է, տարեկան տեղումների քանակը 350-400մմ: Գյուղը հարուստ է պատմական հուշարձաններով՝ Ժամի տափ /Ուլգյուր/ հին գյուղատեղին, ճարտարապետ Մոմիկի կառուցած Սրբ.աստվածածին եկեղեցին, 13-րդ դար, 10-11-րդ դարերի թվագրված մահարձաններ, խաչքարեր, 13-րդ դարի կառույց <<Աղջկաբերդ>>ամրոցը, 14-րդ դարում կառուցած իջևանատունը, Մոմիկ ճարտարապետի գերեզմանը:
Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ, խաղողագործությամբ և պտղագործությամբ: Բնակավայրում գործում են խաղողի վերամշակման 4 արտադրամասեր: Կայուն տնտեսական աճ ապահովելու, բնակչության կապը գյուղին ամրացնելու, միգրացիան կանխելու համար անհրաժեշտ է բնակավայրում զարգացնել և բարելավել ենթակառուցվածքերը , ինչպես նաև մասնավոր հատվածին ինտեգրել գյուղի զարգացման գործընթացին:
Բնակչության թիվը 2030 է, որից 934կին:

2.1.5 ԳՆԻՇԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գնիշիկ բնակավայրը իր մեջ ընդգրկում է 2գյուղ՝ Գնիշիկ և Մոզրով: Բնակավայրի բարձրությունը ծովի մակարդակից 2060մետր է, կլիման ձմեռը տեղումնառատ է , մեղմ, ամառը՝ զով: Տարեկան տեղումների քանակը 350-400մմ է:
Բնակավայրը սահմանամերձ է: Գիշիկ գյուղի վարչական տարածքից է սկիզբ առնում համանուն գետը: Բնակավայրը հարուստ է մշակութային հուշարձաններով ՝ խաչքարեր, խոյերի քանդակներ, պահպանվում է 13-րդ դարի եկեղեցու ավերակները: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և մեղվապահությամբ: Բնակավայրում գործում է բազալտի հանքավայր: Սակավ բնակչությունը և ենթակառուցվածքների բացակայությունը խոչընդոտում են բնակավայրի զարգացմանը: Բնակավայրը զարգացնելու, բնակչության թիվը ավելացնելու համար անհրաժեշտ է կառուցել ենթակառուցվածքներ , զարկ տալ տուրիզի զարգացմանը, որը կօգնի հզորացնել տնտեսությունը և բնակչությանը ինտեգրել իր հող ու ջրին:

Բնակչության թիվը երկու գյուղում միասին 161 է, որից 81 կին:

2.6 ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ելփին բնակավայրը համայնքի հնագույն բնակավայրերից է ,վերաբնակեցվել է 1928 թվականին պարսկական Սալմաստ գավառից եկած ներգաղթյալներով: Գյուղը գտնվում է ծովի մակարդակից 1545 մետր բարձրության վրա, կլիման մեղմ է, տարեկան տեղումների քանակը՝ 280-350 մմ :
Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և պտղագործությամբ: Բնակավայրի վարչական տարածքում են գտնվում հին գյուղատեղիներ, <<Թուխ Մանուկ>>սրբավայրը, հին խաչքարեր, որոնց առկայությունը հնարավորություն է տալիս զարգացնել զբոսաշրջությունը: Բնակավայրը ունի թույլ զարգացած ենթակառուցվածքներ, անմխիթար վիճակում են գտնվում համայնքային ենթակայության ոռոգման ջրագծերը, գյուղը զարգացնելու և տնտեսական աճ ապահովելու համար կարիք կա բարեկարգել ենթակառուցվածքները, ակտիվացնել համայնք մասնավոր փոխհամագործակցությունը, սկսել գյուղատնտեսության զարգացման գործընթաց:

Բնակչության թիվը 1266 է , որից 599 կին:

2.1.7 ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խաչիկը համայնքի սահմանամերձ բնակավայրերից է (երեք կողմից սահմանակից է Ադրբեջանի հետ ,սահմանը ձգվում է 27 կմ), որի վարչական սահմաններում է տեղակայված N զորամասը:
Վարչական տարածքը 7303հա է, բարձրությունը ծովի մակարդակից 1850 մետր է, կլիման ձմռանը ցուրտ է, ամառը `զով, տարեկան տեղումների քանակը 350-400մմ է: Խաչիկ բնակավայրը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով՝ Քարակոփի Խոտակերանց վանքը, գյուղամիջի ժամը, ժամի Թիլ, Մեղրաքար , Ջրաղացների բերդերը, հին բնակատեղիներ, ձիթահանքի, 5-6 ջրաղացների ավերակներ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է այգեգործությամբ, անասնապատությամբ և մեղվապահությամբ: Բնակչության միգրացիան կանխելու , գյուղում կայուն տնտեսական աճ ապահովելու համար կարիք կա ստեղծել աշխատատեղեր, ինչպես նաև մասնավոր հատվածին մասնակից դարձնել գյուղի զարգացման գործընթացին:
Բնակչության թիվը 1000 է , որից 483 կին:

2.1.8 ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Չիվա գյուղի պատմությունը սկիզբ է առնում հեթանոսական ժամանակներից: Չիվայի մասին հիշատակումներ կան Ստեփանոս Օրբելյանի <<Սյունիքի պատմություն>> աշխատության մեջ՝ 13-րդ դարի թվագրությամբ: Երբեմնի վանքապատկան գյուղը 1820-ական թվականներին վերաբնակեցվում է հայերով և այլազգիներով:1988 թվականից գյուղում ապրում են միայն հայեր:
Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից 1116 մետր է, կլիման կիսաչորային , տեղումների քանակը տարեկան 250-300մմ է:
Գյուղը մի քանի անգամ տեղափոխվել է՝ ձորամիջից բարձրանալով դեպի սարալանջ:
Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ, մասամբ նաև մեղվապահությամբ:
Գյուղը գտնվում է սողանքային գոտում, որը պատճառ է դարձել բնակչության արտահոսքին: Բնակչությանը գյուղին կապելու, տնտեսությունը զարգացնելու համար կարիք կա ամրացնել սողանքային գոտին, զարգացնել բնակավայրում արդեն իսկ գործող հյուրատնային բիզնեսը, բարեկարգել առկա ենթակառուցվածքները, կառուցել նորերը:
Բնակչության թիվը 813 է,որից 388 կին:

2.1.9 ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռինդ գյուղը հիմնադրվել է 1800-ական թվականներին Շորգեցի Սիմոնի կողմից:
1967 թվականին, սողանքի պատճառով, տեղափոխվել է <<Թափ>> կոչվող հանդամաս:
Բնակավայրն ունի մեղմ կլիմա, տարեկան տեղումների քանակը 350-400 մմ է:
Գյուղի տարածքում պահպանվել են 12-13-րդ դարերի եկեղեցու մնացորդներ, մատուռներ, խաչքարեր:
Ռինդ գյուղը համայնքի համեմատաբար բարեկարգ բնակավայրերից է և գրավիչ վայր զբոսաշրջության զարգացման համար , առավելևս ագրոտուրիզմի զարգացման համար:
Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ:
Գյուղը հայտնի է իր մշակած մրգերով՝ դեղձ, կեռաս, բալ, ծիրան:
Բնակավայրը 2013 թվականին ճանաչվել է լավագույն համայնք: Բնակավայրը կայուն զարգացած և առավել գրավիչ դարձնելու համար անհրաժեշտ է բարեկարգել որոշ ենթակառուցվածքներ:
Բնակչության թիվը 1485 է, որից 693 կին:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում և արտաքին ցանցի կառուցում
- Ոռոգման ջրագծերի կառոցում, հիմնանորոգում, փոքր ջրամբարների կառուցում
- Բոլոր բնակավայրերում փողոցների ամբողջական լուսավորության ապահովում և լուսավորման խնայողական համակարգի ներդրում
- Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Բնակավայրերում առկա մանկապարտեզների բարեկարգում,Արենի և Ելփին բնակավայրերում մանկապարտեզների կառուցում
- Բնակավայրերում գործող կույուղագծերի հիմնանորոգում, նոր կոյուղագծի և դիտահորի կառուցում
- Զբոսաշրջության զարգացում
- Նոր գույքի, մեքենասարքավորումների ձեռք բերում

- Բնակավայրերում երիտասարդական կենտրոնների ստեղծում, զբոսայգիների, խաղահրապարակների հիմնում
- Փոքր և միջին բիզնեսի զարգացմամբ աշխատատեղերի ստեղծում
- Բնակավայրերի գազաֆիկացում
- Արոտների բարեկարգում
- Գյուղատնտեսական կոոպերատիվի ստեղծում, կոոպեերատիվ կառավարման գինեգործարանի կառուցում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջանները և ներգրավվել նոր ծրագրեր: Այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է ծրագրեր ԵՄ-ի, ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող <<ԳՊԼ>>-ի,Վայրի բնության և մշակութայինարժեքների պահպանման հիմնադրամի(FPWC) , ՅՀՄ Հայ ասոն Հիմնադրամ , «Թուֆենկյան հոսփիթալ իթի» ՄՊԸ-ի /հյ ուրանոցայ ին համալ իրի կառուցում / և այլ կազմակերպությունների հետ: Նախատեսվում է համագործակցել մասնավոր ընկերությունների հետ նոր ծրագրեր կյանքի կոչելու համար (նոր այգիների հիմնում, զբոսաշրջության զարգացում և այլն) :

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքիը ընդհանուր նկարագրություն

Արենի համայնքը կազմավորվել է ՀՀ վարչատարածքային բաժանման մասին օրենքում կատարված օրենսդրական փոփոխությամբ 2017թվականի հունիսի 19-ին:
Համայնքի կազմում ընդգրկվել են 9 բնակավայրեր՝ Արենի, Արփի, Աղավնաձոր,

Ագարակաձոր, Գնիշիկ, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ, որոնցից 6 բնակավայր սահմանամերձ է:
Համայնքի բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 1090-2000 մետր բարձրության վրա:
Արենի համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, քարանձավներով, հին գյուղատեղիներով, պահպանվող ազգային խոհանոցով:
Համայնքի բնակչությունը ունի հետևյալ նկարագիրը ըստ բնակավայրերի՝

հ/հ	բնակավայր	ընդամենը	0-18 տարեկան	18-63 տարեկան	63-ից բարձր տարիք
1	Արենի	1971	466	1282	223
2	Ազարակաձոր	1385	323	890	172
3	Աղավնաձոր	2030	440	1328	262
4	Արփի	1161	284	773	163
5	Գնիշիկ	66	5	54	7
6	Մոզրով	137	32	94	11
7	Ելփին	1266	258	858	150
8	Խաչիկ	1000	193	686	121
9	Չիվա	813	149	560	104
10	Ռինդ	1485	335	955	195
11	ընդհամենը	11272	2369	7673	1484

Առկա տնտեսությունների թիվը՝ 2663

Թոշակառուներ՝1484

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2017թվականի դրությամբ ըստ բնակավայրերի՝

ԱՐԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 46116.8 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում են 25.3%:

Բնակավայրում գործում են 42 Ա/Ձ-եր,որոնք զբաղվում են մանրածախ առևտրով,4 գինու արտադրամաս, հյուրատներ, ռեստորաններ: Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտղագործությամբ, գինեգործությամբ: Ստացված հիմնական արտադրանքը իրացվում է տեղում և Երևան քաղաքում: Շահագործվում է տրավերտինի 2 հանքավայր : Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց , մեկ ԲԿ, փոստի բաժանմունք: Զարգանում է զբոսաշրջությունը, որը մեծ հեռանկար է բացում գյուղի տնտեսությունը կայուն և դինամիկ զարգացնելու համար:

ԱՐՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Արփի բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 30095,5 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 21%:

Բնակավայրում գործում են 16 անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են մանրածախ առևտրով, գործում է մեկ ԱԳԼՃԿ, մեկ հեղուկ վառելիքի լիցաքավորմն կետ:
Բնակավայրի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:
Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզերում և Երևանում:

Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, մեկ համայնքային ենթակայության մանկապարտեզ , բուժկետ, վարսավիրանոց:
Բնակավայրն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:
Այժմ բնակավայրում գործում է մեկ հյուրանոց և մեկ հյուրատուն,անհրաժեշտ է ավելացնել հյուրատների ցանցը , զարգացնել ագրոտուրիզմը, որի համար կան բավարար ռեսուրսներ:

ԱԳԱՐԱԿԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ագարակաձոր բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 31800.1 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 27.6%:

Բնակավայրում գործում են 6 անհատ ձեռնարկատերեր,որոնք զբաղված են մանրածախ առևտրով, գործում է քարի մշակման 2 արտադրամաս:

Բնակավայրի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է Վայոց Ձորի,Գեղարքունիքի,Սյունիքի մարզերում և Երևանում:

Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, համայնքային ենթակայության մեկ մանկապարտեզ, բուժկետ, փոստի բաժանմունք:

Համայնքն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

ԱՂԱՎՆԱՃՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Աղավնաձոր բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 56894.0 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 42.5%:

Բնակավայրում գործում են 6 անհատ ձեռնարկատերեր,որոնք զբաղված են մանրածախ առևտրով, գործում է գինու 4 արտադրամաս:

Բնակավայրի բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ, պտուղ-բանջարեղենի արտադրությամբ, գինեգործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է Վայոց Ձորի, Գեղարքունիքի մարզերում և Երևանում:

Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, համայնքային ենթակայության մեկ մանկապարտեզ, մեկ արվեստի դպրոց, ԲԿ, փոստի բաժանմունք:

Բնակավայրն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար բոլոր նպաստավոր պայմանները:

ԳՆԻՇԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Գնիշիկ բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 6937.1 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 48.6%:

Բնակավայրում շահագործվում է քարի մեկ հանքավայր:

Բնակավայրի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է տեղում և Երևանում:

Բնակավայրում գործում է մեկ հիմնական դպրոց, հյուրատներ:

Բնակավայրն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

ԵԼՓԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ելփին բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 29635.2 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 17.4%:

Բնակավայրում գործում են 5 անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են մանրածախ առևտրով, հացաթխման մեկ արտադրամաս:

Բնակավայրի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է տեղում և Երևանում:

Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ, փոստի բաժանմունք:

Բնակավայրն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Խաչիկ բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 23410.2 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 17.2%:

Բնակավայրում գործում են 3 անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են մանրածախ առևտրով, շահագործվում է քվարցիտների արդյունահանման հանքավայր:
Բնակավայրի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է տեղում և Երևանում:
Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ, փոստի բաժանմունք, տեքստիլ արդյունաբերության արտադրամաս:

Նախատեսվում է հիմնել շամպայն գինիների արտադրություն:
Բնակավայրն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

ՉԻՎԱ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Չիվա բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 22260.8 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 17.6%:

Բնակավայրում գործում են հյուրատներ և 4 անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են մանրածախ առևտրով:

Բնակավայրի բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ:
Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է տեղում և Երևանում:
Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, բուժկետ, փոստի բաժանմունք:
Բնակավայրն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Ռինդ բնակավայրի 2017 թվականի բյուջեի ընդհանուր տարեկան եկամուտները կազմել են 35022.2 հազար դրամ, որից սեփական եկամուտներ կազմում է 23.1%:

Բնակավայրում գործում են 5 անհատ ձեռնարկատերեր, որոնք զբաղված են մանրածախ առևտրով:

Բնակավայրի բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է տեղում և Երևանում:
Բնակավայրում գործում է մեկ միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժկետ, փոստի բաժանմունք, գինու արտադրամաս:
Բնակավայրն ունի գյուղատնտեսության և զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների /ՁԻՁ, ԵՄ, ԵԽ, ՄԱԶԾ, ՄԱԿ/ ինչպես նաև անհատ ներդրողների հետ: Նախատեսվում է շարունակել համագործակցությունը <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> հասարակական կազմակերպության հետ՝ <<Անասնապահության զարգացում Հարավային Կովկասում>> ծրագրի շրջանակներում, նպատակ ունենալով խթանել անասնապահության զարգացումը համայնքում, ԱՐԴԻ ծրագրով զարկ տալ նոր այգիների հիմնմանը:
Համայնքը համագործակցում է նաև Հայաստանի <<Ֆուլեր տնաշինական կետրոն>> ԲՀԿ-ի հետ, նպատակ ունենալով համայնքի անապահով և բնակարանի կարիք ունեցող ընտանիքներին օգնելու և աջակցելու բնակարանների կառուցումը ավարտին հասցնելու հարցում, Գնիշիկ բնապահպանական հիմնադրամի,Վայրի Բնության Պահպանություն հիմնադրամի և Թուֆենկյան հիմնադրամի հետ:

Աշխատանքներ է տարվում դոնոր կազմակերպություններ , ինչպես նաև անհատ ներդրողներն գտնելու և համայնքին հուզող հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող և բոլոր բնակավայրերից հավաքագրվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտներում սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք. փաստացի տվյալներով աճել են:

Արենի համայնքի 2023 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 513.648.000դրամ, որից սեփական եկամուտներ՝ 172,696,000 դրամ:

Առաջիկա 5 տարիներին նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը՝ ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Համայնքի 5-ամյա զարգացման ծրագրերի իրակացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Արենի համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և այգեգործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքի որոշ բնակավայրերում չկան մշակութային օջախներ, մարզադահլիճներ, երիտասարդական կենտրոններ, ունեն թույլ զարգացած ենթակառույցներ, որոնք պատճառ են դառնում երիտասարդ ընտանիքների բնակավայրերը լքելուն:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից , համայնքը առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Բնակավայրերում խմելու ջրի ներքին ցանցերի հիմնանորոգում և արտաքին ցանցերի կառուցում
- Բնակավայրերում փողոցների ամբողջական լուսավորության ապահովում և լուսավորման խնայողական համակարգի ներդրում
- Ներբնակավայրային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Բնակավայրերում առկա մանկապարտեզների բարեկարգում, Արենի և Ելփին բնակավայրերում մանկապարտեզների կառուցում, Խաչիկում մեկ խմբանոց մանկապարտեզի գործարկում

- Բնակավայրերում գործող կույուղագծերի հիմնանորոգում, նոր կոյուղագծերի և դիտահորերի կառուցում
- Զբոսաշրջության զարգացում
- Բնակավայրերում երիտասարդական կենտրոններիի ստեղծում, զբոսայգիների հիմնում
- Փոքր և միջին բիզնեսի զարգացմամբ աշխատատեղերի ստեղծում (գյուղատնտեսության ոլորտ)
- Բնակավայրերի գազաֆիկացում
- Ենթակառուցվածքների զարգացում, կառուցում
- Փառատոների կազմակերպում

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության, միջազգային կառույցների և մասնավոր ներդրողների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Ուժեղ կողմեր

1. Զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ
2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ
3. Համայնքում գործող փոքր բիզնեսներ
4. Համայնքի բնակավայրերի մի մասի գազաֆիկացված լինելը
5. Հեռախոսակապի և ինտերնետ կապի առկայությունը

Թույլ կողմեր

1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին
2. Զբաղվածության խնդիր
3. Մշակութային կյանքի պասիվություն
4. Գյուղտեխնիկայի պակաս
5. Ենթակառուցվածքների անբավարար վիճակ

SWOT վերլուծություն

Հնարավորություններ

1. Համայնք զբոսաշրջիկների այցելություն
2. Համայնքի զարգացմանը միտված ծրագրերի շարունակական բնույթ և աճ
3. Համագործակցության շրջանակների ընդլայնում

Վտանգներ

1. Համայնքում բնակչության միգրացիայի աճ
2. Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում
3. Սողանքների, քարաթափումների , հեղեղումների մեծ վտանգ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է՝ ունենալ զարգացած և բարեկարգ համայնք , առանց սոցիալական խնդիրների և անապահով ընտանիքների (զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով զարգացող) համայնք: Համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղվածություն, կդադարի միգրացիան, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում ըստ ոլորտների:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Հասարակական շենքերի, շինությունների կառուցում/նորոգում, գույքով համալրում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Համայնքային գույքի պահպանում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ՝
Մատուցվող ծառայությունների բարելավում</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ /հազար դրամ/</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td></td><td>85000000</td><td>23000000</td><td>32000000</td><td>320000000</td><td>38000000</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝
Նորոգված հասարակական շենքեր, առկա գույք և շինություններ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ /հազար դրամ/</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2022</td><td>2023</td><td>2024</td><td>2025</td><td>2026</td><td>2027</td></tr>
<tr><td></td><td>85000000</td><td>23000000</td><td>32000000</td><td>320000000</td><td>38000000</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">Միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ
Գնումների կազմակերպում, պայմանագրերի կնքում, աշխատանքների ընդունում, ավարտական ակտի կազմում և համաձայնեցում շահագրգիռ կողմերի հետ:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 35.000.0, հազար դրամ
Կապիտալ ծախսեր՝ 463.000.0 հազար դրամ,
Ընդհանուր բյուջեն՝ 498.000.0 հազար դրամ:</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Պատերազմ, համաճարակ, ֆինանսական միջոցների սղություն</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Հասարակական շենքերից օգտվողներ՝ սաներ, աշխատակիցներ, բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2023 -2027 թվականներ</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Ծրագրով նախատեսվում է՝
✓ 2023 թվական
Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցում, 2-րդ տրանշ

✓ 2024 թվական
Արենի բնակավայրում մշակույթի տան մասնակի նորոգում
✓ 2025 թվական
Խաչիկ, Չիվա բնակավայրերում մշակույթի տների բարեկարգում,
✓ 2026թվական
Համայնքապետարանի շենքի կառուցում
✓ 2027 թվական
Ելփին բնակավայրի մշակույթի տան նորոգում:</td></tr>
</table>

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր

«Կրթական և մշակութային հիմնարկների շենքերի նորոգում, վերազինում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքային գույքի պահպանում, նախադպրոցական կրթություն և արտադպրոցական դաստիարակություն, համայնքի մշակութային կյանքի կազմակերպում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Մատուցվող ծառայությունների բարելավում**							
	Ցուցանիշներ /հազար դրամ/	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2022	2023	2024	2025	2026	2027
		85129400	280129400	262000000	60000000	50000000	35000000
